



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**<< Հետաքննող լրագրողներ>> ՀԿ-ի <<Հետք>>  
թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին**

**Հարգելի պարոն Բալասանյան,**

Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետարան հասցեագրված Ձեր հարցման, հայտնում ենք, որ ՀՀ Արմավիրի մարզում ոռոգման ջրամատակարարումը իրականացվում է 254.18կմ երկարությամբ միջտնտեսային և 4705.2կմ երկարությամբ ներտնտեսային ոռոգման ցանցի, 358 աշխատող խորքային հորերի և 50 պոմպակայանների միջոցով:

Մայր և միջտնտեսային ջրանցքների վիճակը բավարար է, սակայն դեռևս վիճակը անմխիթար է ոռոգման ներտնտեսային ցանցերում, որտեղ ջրի կորուստները տատանվում են 20-40 տոկոսի սահմաններում՝ հատկապես ոռոգման գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքներում: Մարզպետարանի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մարզում ոռոգման ջրի սակավության, բացակայության և ոռոգման ցանցի բացակայության պատճառով գյուղատնտեսական նշանակության և տնամերձ հողամասերից չի մշակվում շուրջ 10700 հեկտար: Այդ հողատարածությունները գյուղատնտեսական արտադրության մեջ ներառելու համար մեր կողմից առաջարկվել է իրականացնելու հետևյալ աշխատանքները.

- ա. 27 համայնքներում հորատել 54 խորքային հորեր
- բ. 21 համայնքներում վերանորոգել 70 խորքային հորեր
- գ. կառուցել 273 կմ երկարության ներտնտեսային ցանց
- դ. վերանորոգել 107 կմ երկարության ներտնտեսային ցանց
- ե. 9 համայնքներում կառուցել 12 պոմպակայան:

Ոռոգման ներտնտեսային ցանցերի բարելավման խիստ անհրաժեշտություն կա հատկապես՝ Արգավանդ, Արտաշար, Երասխահուն, Մրգաշատ, Ակնալիճ, Բաղրամյան /Էջմ/, Նորակերտ, Բաղրամյան /Բաղ/, Արտամետ, Մյասնիկյան, Տավրիկ, Շենիկ, Քարակերտ, Բագարան, Եղեգնուտ համայնքներում, որորնք ունենում են ջրի մեծ կորուստներ և ոռոգման ջրամատակարարման լուրջ դժվարություններ:

2019թ.համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ավարտվել է Բաղրամյան – Նորակերտ ինքնահոս համակարգի 600հա ներքին ցանցի կառուցումը /կաթիլային ցանց/, որի շինարարական արժեքը կազմում է 459,39 մլն դրամ:

Սուբվենցիոն և առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի շրջանակներում մարզի Վանանդ, Այգեշատ/Էջմ/, Նորակերտ և Շենիկ համայնքներում վերականգնվել է 7562մետր երկարությամբ ոռոգման ներտնտեսային ցանցեր՝ 118.2 մլն դրամ շինարարական արժեքով:

ԶՕԸ-ի միջոցներով ամբողջովին վերականգնվել են 3 խորքային հորեր՝ Հայթաղ, Ակնալիճ և ք. Էջմիածին համայնքներում:

2020թ. պետբյուջեի ֆինանսավորմամբ 6 համայնքներում հորատվել են 6 և վերականգնվել են նույնքան խորքային հորեր:

Մեկնարկել է և մինչև օրս շարունակվում է եվրոպական զարգացման բանկի ֆինանսավորմամբ ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնման ծրագիրը, որի արդյունքում վերականգնվելու են 39 համայնքների 93610 մետր երկարության ոռոգման ներտնտեսային ցանցերը՝ համայնքների կողմից շինարարական արժեքի 10 տոկոս համաֆինանսավորմամբ: Շինարարության արժեքը կազմում է 2.89մլրդ դրամ /ցանկը կցվում է/:

Մարզում մասնավոր հողօգտագործողների կողմից կառուցվել են 18 ջրամբարներ՝ 918.6հազ.խմ ծավալով որի շնորհիվ 1703 հա-ի վրա իրականացվում է կաթիլային , իսկ 81.3հա-ի վրա անձրևացման եղանակով ոռոգում:

Նշված աշխատանքները ոչ միայն բարելավելու են ջրամատակարարումը, այլ նաև զգալիորեն կրճատելու են համակարգում դեռևս գոյություն ունեցող ջրի մեծ կորուստները:

Հանրապետությունում գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող 71 համայնքներից 25-ը գտնվում են Արմավիրի մարզում:Դրանք են՝ Կողբավան, Շենիկ, Բաղրամյան/Բաղ/, Քարակերտ, Դալարիկ, Արգինա, Արտամետ, Վանանդ, Արևադաշտ, Տավորիկ, Մյասնիկյան, Խանջյան, Լուկաշին, Մայիսյան, Ակնալիճ, Արշալույս, Ֆերիկ, Ծաղկալանջ, Լեռնամերձ, Ամբերդ, Նորակերտ, Բաղրամյան /Էջմ/, Մուսալեռ, Այգեկ, Մերձավան համայնքները:

Համայնքներում առկա գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածությունների քանակը կցմվում է՝ ըստ համայնքների և սպասարկող ԶՕԸ-ի:

Մեր կողմից առաջարկություն է ներկայացվել լրացուցիչ ճշգրտելու գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող ինչպես համայնքների, այնպես էլ համայնքների ներսում հողատարածությունների չափերի ցանկը:


Առդիր էլեկտրոնային նյութ

**Գլխավոր քարտուղար՝**

**Ա. Հովհաննիսյան**

Կատ. Ա Այվազյան

 Недействительная подпись



VERIFIED OCSP 26.07.2021 11:50:03 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023